



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 22 ՄԱՅԻՍ, 2017

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՐՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, ԿՈՒՐ ԻՆՃ Իմաստութիւն ՎԲԱՐԻՍ ԽՈՐԻԵԼ ԵՆ ԽՍՍԵԼ ԵՆ ԳՈՐԾԵԼ առաջի քո լամենայն ժամ. Ի չար խորհրդոց, Ի բանից եւ Ի գործոց փրկեալ լիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 42

ԾԱՐԱԻ ԵՄ ՔԵԶԻ, ՏԷՐ

Ինչպէս եղօքրուն վազող օտրերուն կը փափափի,
այնպէս ալ ես, ով Աստուած բեզի կը փափափիմ:
Ծարաւ եմ Աստուծոյ, կենդանի Աստուծոյն.
Ե՞րբ պիտի գամ՝ ներկայանամ Աստուծոյ:
Օր ու գիշեր՝ արցունքս է կերակուրս,
մինչ օրն ի բուն մարդիկ ինձի կը հարցնեն. «Ո՞ւր է Աստուածդ»:
Սակայն ինչն՞ է կը տխրիս, ով իմ անձս, կամ ինչն՞ է կը խոռովիս.
Աստուծոյ յուսայ, եւ վերստին գովերգէ զայն, ըսելով. «Փրկիչս դուն ես»:
Տէրը ինձի հետ է, ցերեկը՝ իր ցուցաբերած հոգածութեամբ,
գիշերը՝ իր երգով, որ աղօթք է՝ Աստուծոյ, զիս կենդանի պահողին:
Եւ աղօթքիս մէջ Աստուծոյ կ'ըսեմ.
«Դուն ես իմ պաշտպան Վէմս, ինչն՞ է մոռցար զիս.
Ինչն՞ է համար տրտում ըլլամ, երբ թշնամին կը նեղէ զիս»:
Սակայն ինչն՞ է պիտի տխրիմ, եւ կամ ինչն՞ է խոռովիմ.
Աստուծոյ պիտի յուսամ, եւ վերստին գովերգեմ զայն, ըսելով.
«Փրկիչս ես դուն, իմ Աստուածս ես»:

ՆԱՐԱԿԱՆ-ԱՐՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Վմենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հուանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
Եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒԲԱՆ ՆԻԻԹԸ



ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԷՆ

1:1-2

Պետրոս Առաքելալի գրած առաջին նամակը ուղղուած է «Աստուծոյ ընտրեալներուն», այսինքն քրիստոնէականներու, որոնք ցրուած էին Փոքր Ասիայի հիւսիսային եւ արեւելեան կողմերը: Այս շրջաններու եկեղեցիները հիմնուած էին Պօղոսի կամ անոր գործակիցնէ թուն ջանքերով: Պետրոս այս նամակը գրած է Հռոմէն, որ խորհրդանշականօրէն «Բաբելոն» կը կոչէ:

Նամակին գլխաւոր նպատակն է քաջալերել ընթերցողները, որոնք իրենց քրիստոնէական հաւատքին համար հալածանքներու եւ նեղութիւններու դիմաց կը գտնուէին: Հեղինակը այս մասին խօսած ատեն կը յիշեցնէ օրինակը Յիսուս Քրիստոսի, որուն մահը, յարութիւնը եւ խոստացուած գալուստը իրենց յոյս պէտք է ներշնչեն: Ասոր լոյսին տակ, ճշմարիտ քրիստոնէականները պէտք է ընդունին նեղութիւնները եւ դիմանան անոնց, որովհետեւ ատիկա իրենց հաւատքին հարազատութեան երաշխիքն է: Եւ անոնք որ դիմանան՝ պիտի վարձատրուին երբ Յիսուս Քրիստոս կրկին յայտնուի:

Քաջալերական խօսքերու կողքին, հեղինակը կը պահանջէ որ ընթերցողները իրենց հաւատքին մէջ միշտ արթուն եւ պատրաստ ըլլան, սուրբ կեանքով եւ անկեղծ եղբայրութեամբ ապրին, եւ կենդանի տաճարներ ըլլան՝ ամբօրէն հաստատուած Քրիստոսի ժայռին վրայ:

ՆԱՄԱԿԻՆ ԱՄՓՈՓ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

- Նախարան (1.1-2):
- Յիշեցում Աստուծոյ փրկագործութեան (1.3-12):
- Մարտը եւ սուրբ կեանք մը ապրելու յորդորներ (1.13-- 2.10):
- Քրիստոնէային պարտաւորութիւնը նեղութիւններու ժամանակ (2.11--4.19):
- Քրիստոնէական հեզութիւնը եւ ծառայութիւնը (5.1-11):
- Վերջարան (5.12-14):

ՈՂՋՈՅՆԻ ԽՕՍՔ (1:1-2)

Քանի մը րեղեկութիւն Պետրոսի Առաքելալի մասին: Աւերարանական հապուածները կու գան ցոյց տալու թէ անոր անունը Պետրոս չէր, այլ Սիմոն, Յովնանի որդի: Առաջին իսկ առիթով Քրիստոս իրեն կը հանդիպի Գալիլեայի լիճին եզերքը, րեանելով երկու եղբայրները, որոնք ձկնորս էին. Սիմոն եւ Անդրէաս: Ան կը դառնայ Քրիստոսի աշակերտներէն, բայց նաեւ անմիջական նեղ շրջանակի աշակերտ. օրինակ. Յայրոսի աղջկան բժշկութեան ժամանակ, Թափօր լերան դէպքի ժամանակ: Ինք է որ պիտի արտայայտուէր, թէ Քրիստոսն է Աստուծոյ Միածինը, Օծեալը: Ինք էր նաեւ որ Քրիստոսը ուրացաւ երեք անգամ: Այս ուրացումէն յետոյ գնաց եւ դառնապէս լացաւ, զղջաց: Ահա այդ զղջումին իբրեւ պատասխան Քրիստոս ուզեց ցոյց տալ Իր սէրը հանդէպ Պետրոսին, երբ ըսուեցաւ. «Գացէք ըսէք իմ աշակերտներուս, եւ Պետրոսին»: Առաւել եւս, Քրիստոս երեք անգամ պիտի հարցնէր Սիմոն, Յովնանի որդի, կը սիրես զիս: Արածէ իմ գառնուկներս: Նաեւ ինք եղաւ այն աշակերտը երթալու գերեզման եւ սպուգելու քրոսած անտիպը, թէ Տէրը հոն չէ յարութիւն առաւ: Ահա Քրիստոսի ներողամտութեան ու սիրոյն պարտը եղաւ, որ երբ Վերնապան մէջ Առաքելները Սուրբ Հոգիով լեցուեցան, Պետրոս ինք ուրքի ելլելով քարոզեց ներկաներուն: Ահա այդ Սիմոնը պիտի ըլլար Պետրոս, որ կը նշանակէ ժայռ, որով վրայ պիտի կառուցէ Քրիստոս Իր եկեղեցին: Այսինքն՝ որ Պետրոս անձին վրայ, այլ Պետրոսի դաւանած հաւատքին վրայ, որ Դուն եւ Քրիստոսը, Աստուծոյ Միածինը:

Միւս նամակներու նման, այսպէս եւս, Պետրոս Առաքել ինքզինք կը ներկայացնէ Քրիստոսի Առաքելալը, ոչ որպէս րիպոս, այլ՝ որպէս Քրիստոսի կողմէ դրկուած: Դրկողը Քրիստոս Ինք է: Մարդկային հրաւեր ճամբով չէ որ Պետրոս առաքելութեան կանչուած է, այլ՝ Քրիստոս է զինք կանչողը:

Այս նամակը կը գրէ Աստուծոյ ընտրեալներուն, այսինքն՝ հաւատարմացեալներուն, որոնք կ'ապրին րարբեր շրջաններու մէջ: Այն շրջանները, այն համայնքները, որոնք հասարակուեցան Պօղոս

Առաքելալի քարոզությամբ: Այս շրջաններու մէջ անոնք կ'ապրին պանդուխտներու պէս: Քրիստոնեայ հաւաքացեալի կեանքը պանդխտութեան կեանք է, որ կը նշանակէ մնայուն կեաք չունի, մինչեւ հասնի մնայուն րեղը, որ Աստուծոյ պարտասպաճ յաիպենական կեանքն է: Նաեւ պանդուխտներ են աշխարհագրական իմաստով: Աստուծոյ ընտրեալներուդ: Հին Կրակարանին մէջ կը կարդանք որ Աստուած Իրեն համար ժողովուրդ մը ուզեց պարտասպել, եւ գանոնք կոչեց, որպէս ընտրեալ ժողովուրդ: Այդ ժողովուրդը, սակայն, չկրցաւ պահել այդ ընտրութեան հանգամանքը, որուն համար ալ ահաւասիկ Պետրոս Առաքելալ իր նամակը կ'ուղղէ Աստուծոյ իրաւ ընտրեալներուն:

Երրորդութեան ներկայութիւնը: Հայրն Աստուած իր կանխագիտութեամբ ձեզ ընտրեց, Սուրբ Հոգիով սրբեց, հնազանդելու Յիսուս Քրիստոսին, եւ իր արիւնովը մաքրեց: Քրիստոսի խօսքերն են, «Եթէ Հայրս ձեզ չկանչեց, դուք չէք կրնար ինձի գալ»: Սուրբ Հոգիին դերն է սրբել, Քրիստոսի արիւնն է որ կը մաքրէ մեզ մեր մեղքերէն:

Շնորհք եւ խաղաղութիւն ձեզի: Մի գուցէ բարեւելու եղանակներ էին անցեալի, բայց այսօր Առաքելալը պարզ բարեւելու մասին չէ որ կ'ակնարկէ, այլ Սուրբ Հոգիի շնորհքն ու Քրիստոսի խաղաղութիւնն է որ կը բաշխէ հաւաքացեալներուն, որովհետեւ անոնք իրապէս կարիքը ունին այդ շնորհքին ու խաղաղութեան, մանաւանդ, այն ժամանակահատուածը, որ կ'ապրին նեղութեան, հալածանքի շրջան է: Այս նամակով, երեւաբար, Պետրոս Առաքելալ կ'ուզէ քաջալերել հաւաքացեալները, որպէսզի շարունակենք իրենց հաւաքքի կեանքը: